ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2019թ.

Բովանդակություն

Ներածություն 3

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ 5

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն 15

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ 20

Գլուխ 4. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը 29

Գլուխ 5. Հանձնաժողովի 2018 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն 32

Հավելված 33

Ներածություն

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018 թվականի տարեկան գործունեության հաշվետվությունը կազմվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթներին համապատասխան:

Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղվել է «Հանձնաժողովի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրի» կատարմանը, Օրենքով ամրագրված գործառույթների իրականացմանը և միջազգային պայմանագրերով սահմանված տնտեսական մրցակցության բնագավառին առնչվող պարտավորությունների կատարմանը:

Առկա հիմնախնդիրների լուծման նպատակով Հանձնաժողովը 2018 թվականին շարունակել է աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով.

ա) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում,

բ) տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտման դեպքերի բացահայտում և համապատասխան որոշումների ընդունում,

գ) Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների վերաբերյալ դատական գործերի քննությանը մասնակցություն,

դ) Օրենքում փոփոխությունների և լրացումների կատարում, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից ենթաօրենսդրական ակտերի (կարգերի) ընդունում և կատարելագործում,

ե) ապրանքային շուկաներում դիտանցումների, վերլուծությունների և ուսումնասիրությունների միջոցով Օրենքի հնարավոր խախտումների բացահայտում, կանխում և արգելում,

զ) ձեռնարկատիրության զարգացման նպաստում և սպառողների շահերի պաշտպանության նպատակով ազատ տնտեսական մրցակցության խրախուսում,

է) ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում իրավական ակտերի մշակում և անդրսահմանային շուկաներում իրականացվող ուսումնասիրությունների մասնակցություն,

ը) պետական մարմինների, միջազգային կառույցների և հասարակական

կազմակերպությունների հետ համագործակցություն,

թ) Հանձնաժողովի գործունեության հրապարակայնության ապահովում և հասարակության իրազեկում:

Գլուխ 1. Համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ

Հանձնաժողովը տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականություն իրականացնող ինքնավար մարմին է և անկախ է այլ պետական մարմիններից: Հանձնաժողովի նպատակն է պաշտպանել և խրախուսել ազատ տնտեսական մրցակցությունը, ապահովել բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայր, նպաստել ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը Հայաստանի Հանրապետությունում:

Ինչպես նախորդ տարիների ընթացքում, այնպես էլ 2018 թվականին Հանձնաժողովն իրականացրել է բազմաթիվ ուսումնասիրություններ, գործարար համայնքի և սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ կազմակերպել է բազմաթիվ քննարկումներ՝ նպատակ ունենալով բացահայտել մեր երկրում մրցակցության ոլորտին առնչվող խնդիրները: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունները փաստում են, որ բազմաթիվ շուկաներում կենտրոնացվածության նվազման և շուկայի մասնակիցների քանակի ավելացման գծով արձանագրված դրական միտումները շարունակվել են նաև 2018 թվականին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բիզնես համայնքի հետ քննարկումներում մշտապես բարձրացվել են հավասար հարկմանը վերաբերող խնդիրներ և կարևորվել է ներմուծման գործընթացում մուտքի խոչընդոտների վերացման անհրաժեշտությունը՝ Հանձնաժողովի ուշադրության կենտրոնում է եղել նաև ներմուծման գործընթացում հավասար պայմանների ապահովման հարցը: Հանձնաժողովի կողմից իրականացված վերջին ուսումնասիրությունների համաձայն՝ բազմաթիվ ապրանքային շուկաներում (շաքարավազ, կարագ, բանան, արևածաղկի ձեթ, բրինձ, մակարոնեղեն, հավի միս, ալյուր, ցորեն և այլն) գործել են տասնյակ ներմուծող ընկերություններ: Ընդ որում, մի շարք լայն սպառման և սոցիալական նշանակության շուկաներում մասնակից ընկերությունների քանակն ավելացել է: Այսպես, «Բրինձ» ապրանքային շուկայում 2017 թվականին ներմուծում է իրականացրել 58 տնտեսվարող սուբյեկտ, իսկ 2018 թվականին արդեն՝ 69, այն դեպքում, երբ 2014 թվականին նշված շուկայում ներմուծումներ են իրականացրել ընդամենը 31 տնտեսվարող սուբյեկտ: Նմանապես «Արևածաղկի ձեթ» ապրանքային շուկայում 2017 թվականին ներմուծում է իրականացրել 77 տնտեսվարող սուբյեկտ, 2018 թվականին արդեն՝ 91, իսկ 2014 թվականին՝ 46 ներմուծող տնտեսվարող սուբյեկտ: «Ալյուր» ապրանքային շուկայում 2018 թվականին ներմուծող տնտեսվարող

սուբյեկտների քանակը 2017 թվականի համեմատ աճել է 30 տոկոսով՝ 132-ից դառնալով 171 տնտեսվարող սուբյեկտ: Ընդհանուր առմամբ «Շաքարավազ», «Կարագ», «Բանան», «Արևածաղկի ձեթ», «Բրինձ», «Մակարոնեղեն», «Հավի միս», «Ալյուր» և «Ցորեն» ապրանքային շուկաներում ներմուծման գործընթացում ներգրավված տնտեսվարող սուբյեկտների քանակը 2018 թվականին 2014 թվականի համեմատ աճել է շուրջ 150 տոկոսով, իսկ 2017 թվականի համեմատ շուրջ 9 տոկոսով: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ թեև Հանձնաժողովի կողմից ուսումնասիրված մի շարք ապրանքային շուկաներում գործել են խոշոր (գերիշխող դիրք ունեցող) ընկերություններ, այդուհանդերձ այդ ապրանքային շուկաներում առկա են տասնյակ իրացման փոքր և միջին ծավալներ ունեցող տնտեսվարող սուբյեկտներ: Սա կարող է փաստել այն մասին, որ այդ ապրանքային շուկաներում ձևավորված է մրցակցային միջավայր: Հետևաբար խոշոր ընկերությունների առկայությունը դեռևս չի նշանակում, որ այդ ապրանքային շուկաներում մրցակցությունը սահմանափակ է: Միաժամանակ, խոշոր ընկերություններն ունենալով որոշակի մրցակցային առավելություն մյուս ընկերությունների նկատմամբ, և օգտվելով իրենց մրցակցային առավելությունից, կարող են առաջացնել այդ դիրքի չարաշահման ռիսկեր, մասնավորապես մյուս ընկերությունների համար ստեղծելով տվյալ շուկա մուտք գործելու խոչընդոտներ: Այդ առումով Հանձնաժողովը մշտապես հետևում է բարձր կենտրոնացվածություն ունեցող ապրանքային շուկաներում գործող ընկերությունների վարքագծին, որպեսզի թույլ չտա նրանց կողմից չարաշահումների իրականացումը:

Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ վիճակագրությունը և գործարար համայնքի ներկայացուցիչների հետ կազմակերպված բազմաթիվ քննարկումները փաստում են, որ վերջին տարիներին էապես բարձրացել է Հանձնաժողովի գործունեության վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը և գնալով ավելանում է իրենց գործունեության ընթացքում մրցակցային խնդիրների հանդիպած Հանձնաժողով դիմող տնտեսվարող սուբյեկտների թիվը: Բարձրացված խնդիրների լուծման արդյունքում բազմաթիվ ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրը բարելավվել է և դրանցում հայտնվել են նոր ընկերություններ:

Տարբեր երկրներում տնտեսական մրցակցության քաղաքականությամբ և մրցակցության պաշտպանությամբ զբաղվող պետական մարմինների կողմից իրականացվող գործունեության արդյունավետության և շուկաներում մրցակցային միջավայրի բարելավման վերաբերյալ ամբողջական ուսումնասիրություններ է

իրականացնում «Համաշխարհային տնտեսական ֆորում» միջազգային կազմակերպությունը: Կազմակերպության կողմից կատարվող ուսումնասիրությունները ներկայացվում են ամենամյա զեկույցների ձևով, որոնց շարքին է դասվում նաև Համաշխարհային մրցունակության զեկույցը: Նշված զեկույցում հաշվարկվում են մոտ 140 երկրների տնտեսական և հասարակական կյանքին վերաբերող բազմաթիվ ցուցանիշներ, որոնցից մեկը վերաբերում են երկրների տնտեսական մրցակցության միջավայրին և մրցակցային քաղաքականության արդյունավետությանը: Ընդհանուր առմամբ Հայաստանի վերաբերյալ նշված ցուցանիշի գծով 2010 թվականից ի վեր արձանագրվել է զգալի առաջընթաց: Մասնավորապես մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշով 2018 թվականին Հայաստանը զբաղեցրել է 19-րդ հորիզոնականը, 2017 թվականին՝ 28-րդ հորիզոնականը՝ 2010 թվականի 133-րդ հորիզոնականի փոխարեն. առաջընթացը կազմում է 114 կետ (տես՝ Գծանկար N 1):

Գծանկար N 1

Հայաստանում և մի շարք երկրներում մրցակցության վրա ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող ընկերությունների ազդեցության ցուցանիշի դինամիկան 2010-2018 թվականների ընթացքում



Միաժամանակ նշենք, որ ներկայացված ցուցանիշները միջազգային համեմատությունների տեսանկյունից Հայաստանի համար ապահովում են շատ ավելի նպաստավոր դիրք, քան ունեն տարածաշրջանային և ԱՊՀ անդամ որոշ երկրներ (տես՝ Հավելվածը):

Հանձնաժողովը 2018 թվականի ընթացքում իրականացրել է շուրջ 136 ուսումնասիրություն (այդ թվում՝ 2018 թվականին դեռևս չավարտված), որոնք հիմնականում վերաբերել են համակենտրոնացման գործարքներին, հնարավոր անբարեխիղճ մրցակցության դրսևորումներին, հակամրցակցային համաձայնություններին, անհավասար մրցակցային պայմանների առկայությանը, մենաշնորհ և գերիշխող դիրքի չարաշահումներին: Նշված ուսումնասիրությունները Հանձնաժողովն իրականացրել է տնտեսվարող սուբյեկտներից, քաղաքացիներից, պետական մարմիններից, հասարակական կազմակերպություններից ստացված դիմումների, մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա, ինչպես նաև իր նախաձեռնությամբ: Ընդ որում, իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքում առավել մեծ են եղել Հանձնաժողովի նախաձեռնությամբ և տնտեսվարող սուբյեկտներից ստացված դիմումների հիման վրա կատարված ուսումնասիրությունների մասնաբաժինները (տես՝ Գծանկար N 2): Փոխարենը ինչպես 2017 թվականին, այնպես էլ 2018 թվականին մամուլից, քաղաքացիներից, պետական մարմիններից և հասարակական կազմակերպություններից ստացված դիմումներն էապես փոքր ծավալ են կազմել, և ընդհանուր ուսումնասիրությունների կառուցվածքում նրանցից ստացված դիմումների հիման վրա կատարված ուսումնասիրությունները չեն գերազանցել 15 տոկոսը:

Գծանկար N 2

Հանձնաժողովի կողմից 2018 թվականին իրականացված ուսումնասիրությունների քանակը՝ ըստ տեղեկատվության ստացման աղբյուրների



Կատարված ուսումնասիրությունները թեև վերաբերել են տարբեր ոլորտներին՝ ծառայություններ, առևտուր, պարենային և ոչ պարենային ապրանքների արտադրություն և ներմուծում, էներգետիկա, շինարարություն, պետական գնումներ և այլն, այդուհանդերձ ուսումնասիրությունների կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին են ունեցել առևտրի և ծառայությունների, պարենային և ոչ պարենային ապրանքների, պետական գնումների ոլորտում կատարված ուսումնասիրությունները (տես՝ Գծանկար N 3):

Հանձնաժողովի կողմից 2018 թվականին իրականացված ուսումնասիրությունների քանակը՝ ըստ ոլորտների



Հանձնաժողովի կողմից 2018 թվականին կատարած ուսումնասիրություններում առավել մեծ տեսակարար կշիռ ունեն հնարավոր անբարեխիղճ մրցակցության, գերիշխող դիրքի չարաշահման դեպքերի բացահայտման և կնքվող համակենտրոնացումների վերաբերյալ իրականացվող ուսումնասիրությունները՝ համապատասխանաբար 39 և 23-ական տոկոս մասնաբաժիններով: Ինչ վերաբերում է հակամրցակցային համաձայնությունների բացահայտումներին, ինչպես նաև ապրանքային շուկաներում մրցակցային իրավիճակը գնահատելու գծով կատարված ուսումնասիրություններին, ապա դրանց մասնաբաժինը համապատասխանաբար կազմել է 5 և 10 տոկոս: Ընդ որում, ապրանքային շուկաների ուսումնասիրությունների շրջանակներում Հանձնաժողովը հիմնականում դիտարկել է շուկայի կառուցվածքը, նոր ընկերությունների կողմից շուկա մուտք գործելու, գործող ընկերությունների կողմից արտադրության, ներմուծման և իրացման ընդլայնման հնարավոր խոչընդոտները, շուկայում գործող ընկերությունների շահութաբերության մակարդակները, շուկայի ընդլայնման հնարավորությունները և այլն (տես՝ Գծանկար N 4):

Հանձնաժողովի կողմից 2018 թվականին իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքը ըստ Հանձնաժողովի գործառույթների



Միաժամանակ կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ շուրջ 34 տոկոսի դեպքում խախտվել են մրցակցության օրենսդրության դրույթները և իրավախախտ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառվել են պատասխանատվության միջոցներ:

Բացի այդ, ուսումնասիրությունների 45 տոկոսի պարագայում մրցակցության օրենսդրության խախտման դեպքեր չեն բացահայտվել, ուսումնասիրությունների 17 տոկոսը վերաբերել են համակենտրոնացման գործարքներին, իսկ սկսված ուսումնասիրությունների 4 տոկոսը դեռևս չի ավարտվել (տես՝ Գծանկար N 5):

Գծանկար N 5

Հանձնաժողովի կողմից 2018 թվականին իրականացված ուսումնասիրությունների կառուցվածքը ըստ դրանց արդյունքում ընդունված որոշումների



Հանձնաժողովը, հասարակական հետարքրքրություն ներկայացնող բոլոր ուսումնասիրությունների արդյունքները տարվա ընթացքում մշտապես ներկայացրել է հանրությանը՝ դրանով իսկ ապահովելով թափանցիկության և հաշվետվողականության բարձր մակարդակ:

Հանձնաժողովի աշխատանքների օպերատիվության և արդյունավետության բարձրացմանը մեծապես նպաստել է գործող թեժ գիծը, որի միջոցով քաղաքացիները և տնտեսվարող սուբյեկտները մշտապես ներկայացնում են մրցակցային իրավախախտումների մասին տեղեկություններ, ինչը Հանձնաժողովին հնարավորություն է տալիս առանց լրացուցիչ ռեսուրսներ ծախսելու տեղեկանալ առկա խնդիրներին և համապատասխան քայլեր իրականացնել՝ դրանց լուծման ուղղությամբ:

Հանձնաժողովը մեծածավալ աշխատանքներ է իրականացնում միջազգային համագործակցության շրջանակներում՝ նպատակ ունենալով տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրների լուծման գործընթացին ներգրավել նաև գործընկեր երկրների և կառույցների փորձն ու գիտելիքները: Այս առումով կարևորվում է հատկապես Միջազգային մրցակցության ցանցի (ՄՄՑ/ICN) կազմակերպության և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնի կողմից

կազմակերպվող աշխատաժողովների, սեմինարների և քննարկումների հարթակի օգտագործումը տարբեր երկրներում առկա մրցակցային ոլորտի խնդիրների լուծման գործում: Մասնավորապես Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ/OECD) Բուդապեշտում մրցակցության հարցերով տարածաշրջանային կենտրոնի հետ համագործակցության շրջանակներում Հանձնաժողովի աշխատակիցները մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային ունակությունները կատարելագործելու նպատակով 2018 թվականի ընթացքում վերապատրաստվել են ապրանքային շուկաների ուսումնասիրության, հակամրցակցային համաձայնությունների բացահայտման և համակենտրոնացման նկատմամբ հսկողության և այլ թեմաների շուրջ:

Հանձնաժողովը կարևորում է նաև ԵԱՏՄ և ԱՊՀ անդամակցության շրջանակներում մրցակցային մարմինների միջև իրականացվող փոխգործակցության շարունակականության ապահովումը: Հանձնաժողովը վերջին տարիներին ակտիվորեն օգտագործում է նշված հարթակները հայկական արտադրողների շահերը ներկայացնելու և արտահանման շուկաներում ծագող խնդիրները լուծելու ուղղությամբ: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Հանձնաժողովը 2018 թվականին ինչպես ԱՊՀ, այնպես էլ ԵԱՏՄ համագործակցության շրջանակներում կատարել է համատեղ աշխատանքներ գործընկեր երկրների մրցակցային մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ անդրսահմանային շուկաներում հայկական ապրանքների ներկայացվածության ընդլայնման, մուտքի խոչընդոտների բացահայտման և վերացման նպատակով:

Հանձնաժողովը միջազգային տարբեր կազմակերպությունների շրջանակներում իրականացվող համագործակցությանը զուգահեռ համապատասխան աշխատանքներ է իրականացնում նաև մրցակցային մարմինների միջև իրականացվող երկկողմ փոխգործակցության հաստատման և ընդլայնման ուղղությամբ: Հատկապես կարևորվում է Վրաստանի մրցակցային մարմնի հետ փոխգործակցության շարունակականությունը այն առումով, որ Հայաստան ներմուծվող բազմաթիվ ապրանքների գնագոյացման վրա ազդող մի շարք կարևոր ծախսեր կատարվում են Վրաստանի տարածքում և համապատասխան շուկաներում ուսումնասիրություն իրականացնելիս Վրաստանի մրցակցային մարմնի հետ համագործակցությունը նպաստում է ուսումնասիրությունների արդյունավետությանը և առկա խնդիրների լուծմանը:

Մրցակցային մարմինների միջև իրականացվող երկկողմ փոխգործակցության շրջանակներում Հանձնաժողովի աշխատանքներում առանձնահատուկ մաս են կազմում

Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի (ՀԾՏՄԿՊՀ) հետ կատարվող համատեղ ծրագրերը: Այս առումով Հանձնաժողովի և ՀԾՏՄԿՊՀ միջև համագործակցության շրջանակներում ՀԾՏՄԿՊՀ աշխատակիցները փորձի փոխանակման նպատակով հրավիրվել և մասնակցել են Հանձնաժողովի կազմակերպած քննարկումների, սեմինարների, համաժողովների և այլ միջոցառումների: Կատարվող համագործակցության շարունակականությունը ապահովելու նպատակով 2018 թվականի դեկտեմբեր ամսին ստորագրվել է Հանձնաժողովի և ՀԾՏՄԿՊՀ-ի համատեղ աշխատանքային նոր ծրագիրը, որի հիման վրա նախատեսվում է համատեղ աշխատանքների իրականացում բազմաթիվ ուղղություններով: Բացի այդ, հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովն աջակցել է Արցախի գործընկերներին ինչպես ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, այնպես էլ համատեղ վարույթների իրականացման, փորձի և տեղեկատվության փոխանակման հարցերում:

Գլուխ 2. Ապրանքային շուկաների վերլուծություն

Նպատակ ունենալով ՀՀ-ում ձևավորել հավասար մրցակցային միջավայր՝ Հանձնաժողովը պարբերաբար իրականացնում է առանձին ապրանքային շուկաների ուսումնասիրություններ, որոնց միջոցով նաև հսկողություն է սահմանում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ: Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս վերհանել դրանցում առկա մրցակցային խնդիրները և տալ գործուն լուծումներ:

Գերիշխող դիրքի չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների կանխարգելման և բացահայտման նպատակով 2018 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները կենտրոնացվածության բարձր աստիճան և (կամ) սոցիալական կարևոր նշանակություն ունեցող ապրանքային շուկաների նկատմամբ վերահսկողության ուղղությամբ՝ նպատակ ունենալով դրանցում ապահովել հավասար մրցակցային պայմաններ, նպաստել տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ու սպառողների շահերի պաշտպանությանը: Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը կատարել է մի շարք ուսումնասիրություններ՝ բացահայտելով նաև գերիշխող դիրքի չարաշահման դեպքեր:

Այսպես օրինակ կատարված ուսումնասիրության արդյունքներով Հանձնաժողովը գերիշխող դիրքի չարաշահում է արձանագրել «Ծխախոտ» ապրանքային շուկայում: Մասնավորապես Հանձնաժողով ներկայացված բողոքում մանրածախ առևտրի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտը հայտնել է, որ «Գրանդ Դիլինգ» ՍՊ ընկերությունը դադարեցրել է իրենց ծխախոտի մատակարարումը, ինչի արդյունքում դիմումատուն հայտնվել է անհավասար մրցակցային պայմաններում և առաջացել են շուկայից դուրս մղման ռիսկեր: Իրականացրած ուսումնասիրությամբ պարզել է, որ «Գրանդ Դիլինգ» ընկերության կողմից դիտարկվող առևտրի օբյեկտ ծխախոտի մատակարարման դադարեցումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ դիմումատուն վերադարձրել է «Գրանդ Տոբակո» հայ-կանադական Հ/Ձ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պատկանող ծխախոտի ցուցապահարանը: Միաժամանակ Հանձնաժողովը պարզել է, որ դիմումատուն պատրաստ է ձեռքբերել և իրացնել «Գրանդ Դիլինգ» ընկերության կողմից մատակարարվող ծխախոտը՝ այն ցուցադրելով առևտրի օբյեկտում տեղադրված այլ ցուցապահարանի միջոցով: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «Գրանդ Դիլինգ» և «Գրանդ Տոբակո» ընկերությունները հանդիսանում են անձանց խումբ և ունեն

գերիշխող դիրք «Ծխախոտ» ապրանքային շուկայում: Բացի այդ, համաձայն կատարված ուսումնասիրության մանրածախ առևտրի ոլորտում գործում են բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ, որոնց «Գրանդ Դիլինգ» ընկերությունը մատակարարում է ծխախոտ՝ անկախ այդ առևտրի օբյեկտներում «Գրանդ Տոբակո» ընկերության ցուցապահարանի տեղադրված լինելու հանգամանքից: Հանձնաժողովը նաև պարզել է, որ «Գրանդ Դիլինգ» ընկերությունը չունենալով հստակ չափանիշներ կիրառել է խտրական մոտեցում միևնույն գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար՝ շուկայում ստեղծելով անհավասար մրցակցային պայմաններ: Վերը նշված գործողությունը Հանձնաժողովը որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում, կիրառել պատասխանատվության միջոց և տվել խախտումները վերացնելու հանձնարարական:

Մեկ այլ ուսումնասիրությամբ Հանձնաժողովը գերիշխող դիրքի չարաշահում է հայտնաբերել նաև «Հարավկովկասյան երկաթուղի» փակ բաժնետիրական ընկերության գործողություններում: Այսպես, Հանձնաժողով է դիմել «ԱՄ գրուպ» ՍՊ ընկերությունը՝ հայտնելով, որ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունը հրաժարվում է փոխադրել իրեն պատկանող վագոնները դեպի Վրաստանի Հանրապետություն՝ պարտադրելով վճարել շուրջ 158 մլն դրամի գումար, որը ըստ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության հանդիսանում է վագոնների կայանման համար վճարվելիք գումար: Հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «ԱՄ գրուպ» ընկերությունը դեռևս 2014 թվականին «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունից ձեռք է բերել 40 երկաթուղային վագոն՝ դրանք հետագայում վերանորոգելու և Վրաստանում վերավաճառելու նպատակով: «ԱՄ գրուպ» ընկերությունը դեռևս 2016 թվականին դիմել է ՀՀ տարածքում երկաթուղային փոխադրումներ իրականացնող միակ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությանը նշված 40 վագոնները դեպի Վրաստան տեղափոխման հարցով, սակայն վերջինս տարբեր պատճառաբանություններով մերժել է նշված հարցով համապատասխան դիմումները: «ԱՄ գրուպ» ընկերությունը, ունենալով ֆինանսական խնդիրներ, գրավադրել է վագոնները «Արմսվիսբանկ» փակ բաժնետիրական ընկերությունում, որն էլ իր հերթին արդեն 2018 թվականին դիմել է «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությանը վագոնները դեպի Վրաստան փոխադրման խնդրանքով: Միաժամանակ վարչական վարույթի ընթացքում կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ տևական ժամանակ երկաթուղին մշտապես տարբեր պատճառաբանություններով հրաժարվել է համագործակցել ինչպես «ԱՄ գրուպ», այնպես էլ «Արմսվիսբանկ» ընկերության հետ՝ խոչընդոտելով տնտեսվարողների

գործունեությանը և չարաշահելով իր գերիշխող դիրքը: Նախ պատճառաբանել է, որ վագոնները չեն կարող տեղափոխվել առանց վերանորոգման, ապա նշել է, որ վագոնները կտեղափոխվեն, եթե մարվեն ընկերության նկատմամբ առկա պարտքերը և այլն: Ըստ էության Հանձնաժողովը փաստել է, որ վագոնները ՀՀ տարածքից տեղափոխման այլ միջոց կամ տարբերակ, քան «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության միջոցով է, չկա, քանի որ ընկերությունը համապատասխան ծառայությունների մատուցման գծով ունի մենաշնորհային դիրք: Այսպիսով, «Արմսվիսբանկ» ընկերությունը պահանջով համապատասխան գործողությունների կատարումից հրաժարվելը և նշված ընկերությանը այլ պայմանների պարտադրումը Հանձնաժողովը որակել է որպես գերիշխող դիրքի չարաշահում, կիրառել պատասխանատվության միջոց և տվել խախտումները վերացնելու հանձնարարական:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողով է դիմել ջրաչափերի արտադրությամբ զբաղվող «Արազեն» հայ-գերմանական համատեղ ձեռնարկությունը՝ հայտնելով, որ առանց մրցույթի իրականացման «Վեոլիա Ջուր» ընկերությունը ձեռք է բերել ջրաչափեր, ինչի արդյունքում սահմանափակվել է մրցակցությունը: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Վեոլիա Ջուր» ընկերությունը «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում» ապրանքային շուկայում ունի մենաշնորհ դիրք: Միաժամանակ գործող ընթացակարգերի համաձայն՝ «Վեոլիա Ջուր» ընկերությունը պատասխանատու է ջրաչափերի ձեռքբերման, տեղակայման, փոխարինման և շահագործման համար, ինչի արդյունքում «Ջրաչափերի իրացում» ապրանքային շուկայում հանդիսանում է հիմնական գնորդը: Հանձնաժողովի ուսումնասիրությունների համաձայն՝ «Արազեն» ընկերությունը, թեև ներկայացրել է ավելի ցածր գնային առաջարկ, այդուհանդերձ, հնարավորություն չի ստացել մասնակցել ջրաչափերի մատակարարման գործընթացին, քանի որ «Վեոլիա Ջուր» ընկերությունը ջրաչափերը ձեռք է բերել այլ ընկերությունից ավելի թանկ գնով, ինչի արդյունքում «Արազեն» ընկերությունը, կրելով մեծ վնասներ, դուրս է մղվել շուկայից: Հանձնաժողովը գերիշխող դիրքի չարաշահման համար «Վեոլիա Ջուր» ընկերության նկատմամբ կիրառել է պատասխանատվության միջոց:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Բենզին» ապրանքային շուկայի կենտրոնացվածությունը բարձր է և շուկայում առկա են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտներ՝ Հանձնաժողովը 2018 թվականի ընթացքում ևս

իրականացրել է այս ապրանքային շուկայի ուսումնասիրություն: Հարկ է նշել, որ ի տարբերություն 2017 թվականի, 2018 թվականին «Բենզին» ապրանքային շուկա մուտք են գործել երեք նոր ընկերություններ, որը դրական է անդրադարձել ապրանքային շուկայի մրցակցային միջավայրի վրա: Այսպես, տեսակի բենզինի ներմուծման կառուցվածքում մասնաբաժինները բաշխվել են հետևյալ կերպ. «Սիփիէս օիլ քորփորեյշն» ՍՊ ընկերություն՝ 50.6 տոկոս, «Ֆլեշ» ՍՊ ընկերություն՝ 29.1 տոկոս և «Մաքս պետրոլ» ՍՊ ընկերություն՝ 13.1 տոկոս, «Ռոսնեֆտ էքսպորտ» ՍՊ ընկերություն՝ 6,5 տոկոս, «Էյ Բի Էքսպորտ» ՍՊ ընկերություն՝ 0.5 տոկոս, «Պլատինում օյլ» ՍՊ ընկերություն՝ 0.2 տոկոս (տես՝ Գծանկար N 6):

Գծանկար N 6

Բենզինի ներմուծման կառուցվածքը 2018 թվականին՝ ըստ ներմուծող ընկերությունների



Միաժամանակ, կատարված ուսումնասիրության համաձայն, Գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից 2018 թվականի տարեսկզբին ռեգուլյար տեսակի բենզինի իրացման գները բարձրացել են շուրջ 16 դրամով՝ 2018 թվականի հունվար ամսվա 434 դրամից դառնալով 450 դրամ, որը պահպանվել է գրեթե ողջ տարվա ընթացքում: Վերը նշվածի կապակցությամբ Հանձնաժողովի կողմից դիտարկվել են բենզին ներմուծող ընկերությունների ձեռքբերման գները, առկա պաշարների մնացորդային արժեքները, բենզինի միջազգային գները և այլ ցուցանիշները, որի արդյունքում պարզվել է, որ տեղի ունեցած գնային փոփոխությունները պայմանավորված են եղել ռեգուլյար տեսակի բենզինի ձեռքբերման գների փոփոխություններով (տես՝ Գծանկար N 7):

Գծանկար N 7

Գերիշխող դիրք ունեցող ընկերությունների կողմից մեկ լիտր ռեգուլյար տեսակի բենզինի ձեռքբերման և մանրածախ ցանցերում իրացման գների դինամիկան 2018 թվականի ընթացքում



Ըստ էության, գնային համադրելի փոփոխություններ եղել են նաև բենզինի միջազգային շուկաներում, իսկ ՀՀ-ում բենզինի ներմուծմամբ և իրացմամբ զբաղվող խոշոր ընկերությունների գործունեության ուսումնասիրության արդյունքում մրցակցային օրենսդրության խախտումներ չեն բացահայտվել:

Գլուխ 3. Տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումներ

Հայաստանի Հանրապետությունում ազատ տնտեսական մրցակցությունը պաշտպանելու և խրախուսելու, ձեռնարկատիրության զարգացմանը և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելու տեսանկյունից կարևոր է գերիշխող դիրքի հնարավոր չարաշահումների և հակամրցակցային համաձայնությունների բացահայտման, կանխման, ինչպես նաև վերոնշյալ դրսևորումների դեմ արդյունավետ և հետևողական պայքարելու ուղղությամբ համապատասխան միջոցառումների իրականացումը:

Հակամրցակցային համաձայնությունների առումով խնդրո առարկա են հանդիսանում տարբեր ապրանքային շուկաներում տնտեսվարող սուբյեկտների այնպիսի գործողությունները կամ վարքագիծը, որոնք հանգեցնում են մրցակցության սահմանափակմանը, կանխմանը կամ արգելմանը:

Ինչպես ցույց են տալիս համապատասխան միջազգային փորձը և այս ոլորտում նախկինում իրականացված ուսումնասիրությունների արդյունքները՝ հակամրցակցային համաձայնությունների առումով առավել ռիսկային է համարվում պետական գնումների ոլորտը՝ տնտեսվարող սուբյեկտների միջև մրցույթների կամ աճուրդների պայմանների, դրանց արդյունքների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման տեսանկյունից:

Հանձնաժողովը շարունակել է ուսումնասիրությունները պետական գնումների ոլորտում մրցակցության սահմանափակման դեպքերը բացահայտելու և անբարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների գործողությունները դադարեցնելու նպատակով: Մասնավորապես, հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովն ուսումնասիրել է մի շարք հաստատությունների կողմից պետական գնումների շրջանակներում կաթնամթերքի ձեռքբերման մրցույթները, որոնց արդյունքում բացահայտել է անբարեխիղճ մրցակցության դեպքեր: Կատարված ուսումնասիրություններով պարզվել է, որ մի շարք պետական գնումների մրցույթներում պատվիրատու մարմնի կողմից պահանջված կաթնամթերք ապրանքատեսակի փոխարեն մրցույթներում հաղթող ճանաչված տնտեսվարող սուբյեկտները մատակարարել են այլ ապրանքներ: Այսպես օրինակ, հայտարարված մրցույթով պատվիրատու տնտեսվարող սուբյեկտը ցանկացել է ձեռք բերել խտացրած կաթ, սակայն մրցույթում հաղթող ճանաչված տնտեսվարող սուբյեկտը մատակարարել է «կաթ պարունակող խտացրած սննդամթերք շաքարով», որում ի

տարբերություն խտացրած կաթի առկա են բուսական յուղեր, ինչի հաշվին էլ դրանց գներն ավելի ցածր են խտացրած կաթի գների համեմատ: Հարկ է նշել նաև, որ նմանօրինակ խնդիրներ բացահայտվել են կաթնամթերքի այլ տեսակների (թթվասեր, կաթնաշոռ և այլն) ձեռքբերման մրցույթներում: Հանձնաժողովի գնահատմամբ տնտեսվարող սուբյեկտների նման գործողությունները որակվել են անբարեխիղճ մրցակցության գործողություններ, կիրառել պատասխանատվության միջոցներ և պահանջել վերացնել խախտումները:

Բացի այդ, Հանձնաժողովի կողմից 2018 թվականի ընթացքում նախաձեռնվել են պետական և ՏԻՄ մի շարք հաստատությունների պետական գնումների մրցույթների ուսումնասիրություններ: Նշված ուսումնասիրությունների շրջանակներում պարզվել են, որ մրցույթների հրավերներում պետական մարմինները նշել են կոնկրետ ապրանքային նշանով ապրանքներ, կամ էլ գնման առարկայի տեխնիկական բնութագրերը կազմել են այնպես, որ դրանց համապատասխանել են կոնկրետ ներմուծող կամ արտադրող ընկերության ապրանքները: Հաշվի առնելով, որ մրցույթների մասնակից տնտեսվարող սուբյեկտները որպես կանոն մասնագիտացած են կոնկրետ ապրանքային նշաններով ապրանքների ներմուծման կամ արտադրության գործընթացում, ուստի տնտեսվարող սուբյեկտների մի մասը չի կարողանում մասնակցել մրցույթներին, ինչի արդյունքում նշված մրցույթներում չի ապահովում անհրաժեշտ մրցակցություն: Հարկ է նշել, որ նմանօրինակ խնդիրները Հանձնաժողովը ներկայացնում է մրցույթն իրականացնող պետական և ՏԻՄ համապատասխան մարմիններին, ինչպես նաև վերջիններիս վերադաս մարմիններին՝ առաջարկելով վերանայել նման մոտեցումները և հետագայում ձեռնպահ մնալ մրցակցությունը սահմանափակող գործողություններից:

Հանձնաժողովի կողմից բիզնես համայնքի ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպվող քննարկումների ժամանակ «Տարոն Ավիա» ՍՊ ընկերությունը Հանձնաժողով է ներկայացրել ավիափոխադրումների ոլորտում հավասար մրցակցային միջավայրի ձևավորմանը վերաբերող խնդիրներ: Մասնավորապես Ընկերությունը Հանձնաժողովին հայտնել է, որ դեպի ՌԴ ավիափոխադրումների իրականացման դեպքում հայկական և ռուսական ավիաընկերությունները գտնվում են անհավասար մրցակցային պայմաններում, քանի որ ռուսական օդանավակայանները և աէրոնավիգացիոն ծառայություններ մատուցող կազմակերպությունները կիրառում են էապես բարձր սակագներ օտարերկրյա, այդ թվում՝ հայկական ավիաընկերությունների նկատմամբ: Հաշվի առնելով այն, որ Հայաստանը և Ռուսաստանը գտնվում են

Եվրասիական տնտեսական միության տարածքում, ընկերությունը խնդրել է ուսումնասիրել նշված հարցերը ԵԱՏՄ օրենսդրությանը համապատասխանության տեսանկյունից: Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրության ընթացքում դիտարկվել է ռուսաստանյան բազմաթիվ օդանավակայանների սակագնային քաղաքականությունը, որի արդյունքում պարզ է դարձել, որ ռուսաստանյան օդանավակայանների կողմից օտարերկրյա և տեղական ավիաընկերությունների համար սահմանված սակագները և տուրքերը տարբեր են, ընդ որում՝ օտարերկրյա, այդ թվում հայաստանյան ավիաընկերությունների համար նախատեսված են շատ ավելի բարձր սակագներ և տուրքեր, ինչը կարող է անհավասար մրցակցային պայմաններ առաջացնել ԵԱՏՄ անդամ պետությունների ավիաընկերությունների համար: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայաստանյան և ռուսաստանյան օդանավակայանները գործունեություն են իրականացնում Եվրասիական տնտեսական միության անդամ երկու պետությունների՝ Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության աշխարհագրական սահմաններում, այսինքն խնդիրը վերաբերում է անդրսահմանային շուկաներին, Հանձնաժողովը դիմել է ԵՏՀ համապատասխան կառույցներին՝ համատեղ ուսումնասիրություն իրականացնելու համար: Հանձնաժողովի և ԵՏՀ համատեղ ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ավիաընկերությունների համար սահմանված սակագների և տուրքերի տարբերակված մոտեցումները բացասաբար են ազդում մրցակցային միջավայրի վրա և հնարավորություն չի ստեղծվում ԵԱՏՄ անդամ մյուս պետությունների տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պայմաններով մրցակցել ռուսաստանյան ավիաընկերությունների հետ: Նշված խնդիրները քննարկվել են նաև ՌԴ Դաշնային հակամենաշնորհային ծառայության ներկայացուցիչների հետ և բարձրացված խնդիրները ներկայումս գտնվում են լուծման փուլում:

Բացի այդ, միջազգային համագործակցության շրջանակներում Հանձնաժողովը շարունակել է ակտիվ աշխատանքները ԵԱՏՄ տարածքում հայկական արտադրող ընկերությունների արտադրանքի ներկայացվածության ընդլայնման նպատակով: Այս ուղղությամբ «Եվրասիական տնտեսական շաբաթ» միջոցառման շրջանակում Հանձնաժողովը կազմակերպել է հանդիպում հայկական ապրանքներ արտադրող ընկերությունների և ռուսաստանյան մի շարք առաջատար առևտրային ցանցեր միավորող կազմակերպության (АКОРТ) ներկայացուցիչների հետ: Նմանօրինակ հադիպումները կարևորվում են այն առումով, որ հայկական ընկերությունները չեն կարողանում իրականացնել մատակարարումներ անմիջապես մանրածախ ցանցերին,

այդ գործընթացը կազմակերպում են դիստրիբյուտորական կազմակերպությունների միջոցով, ինչի արդյունքում հայկական ապրանքների գները ռուսական շուկայում բարձրանում են և դառնում ոչ մրցունակ: Նշված հանդիպման ընթացքում քննարկվել են մանրածախ ցանցերում հայկական ապրանքների իրացմանն առնչվող խոչընդոտները և նոր բիզնես կապեր հաստատելու հեռանկարները: Հարկ է նշել, որ հանդիպման արդյունքներով ձեռք են բերվել հստակ պայմանավորվածություններ, ինչի արդյունքում հայկական ապրանքների իրացումը ՌԴ առևտրային ցանցերի միջոցով ավելացել է:

Հաշվետու ժամանակահատվածում նաև շարունակվել է համագործակցությունն այլ պետական մարմինների հետ, քանի որ իրականացվող ուսումնասիրությունների արդյունքները փաստում են, որ շատ դեպքերում հավասար մրցակցությունը խաթարող գործոնները ծնող պատճառներն առնչվում են այլ պետական մարմինների իրավասություններին, նրանց կողմից ընդունվող իրավական ակտերին, տրամադրվող լիցենզիաներին և այլն: Այս ուղղությամբ 2018 թվականի ընթացքում մի շարք ոլորտներում իրականացվել են ուսումնասիրություններ: Չնայած այն հանգամանքին, որ այդ ոլորտի ապրանքային շուկաներում մրցակցային խնդիրներ չեն հայտնաբերվել, այնուամենայնիվ բացահայտված խնդիրները գտնվել են այլ պետական մարմինների իրավասությունների ներքո և իրենց ազդեցությունն են թողել մրցակցային միջավայրի վրա: Ուստի այդ ուսումնասիրությունների արդյունքները տրամադրվել են համապատասխան իրավասու մարմիններին՝ վերջիններիս իրավասությունների և լիազորությունների կարգավորման շրջանակներում գտնվող, ինչպես նաև տարբեր ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող խնդիրների կարգավորման նպատակով:

Այսպես, Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել նաև մաքսային սահմանին ապահովագրական գործակալների կողմից մատուցվող ծառայությունների շուկայում հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով: Գործող օրենսդրության համաձայն՝ ավտոմեքենաները ՀՀ տարածք մուտք գործելիս պետք է պարտադիր ապահովագրվեն, որի իրականացման նպատակով մաքսային սահմանին հարակից տարածքում գործում են ապահովագրական գործակալներ: Կատարված ուսումնասիրության համաձայն Հայաստանում գործում են 6 ապահովագրական ընկերություններ, որոնց անունից ԱՊՊԱ պայմանագրերի կնքումն իրականացնում են ապահովագրական գործակալները: Ընդ որում Բագրատաշենի մաքսային կետին հարակից տարածքում գործող ապահովագրական գործակալներն առանձին վերցված

միաժամանակ չեն համագործակցում ՀՀ-ում գործող բոլոր 6 ապահովագրական ընկերությունների հետ, այլ որպես կանոն հանդիսանում են նրանցից որևէ մեկի գործակալը: Նշված ապահովագրական գործակալները վերջին տարիներին գործել են մաքսային կետի տարածքից դուրս, ինչի արդյունքում սպառողների ներգրավման հարցում ունեցել են նույն հնարավորությունները: Սակայն ՊԵԿ-ի կողմից մաքսային կետի սահմաններում գտնվող տարածքը 10 տարի ժամկետով վարձակալության տրամադրման համար 2017 թվականի դեկտեմբեր ամսին իրականացվել է աճուրդ, որին մասնակցած և հաղթող ճանաչված միակ ընկերությունը հնարավորություն է ստացել մատուցելու ապահովագրական գործակալի ծառայություններ՝ ստանալով առավելություններ իր մրցակիցների նկատմամբ: Կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ապահովագրական գործակալները, այսինքն աճուրդի հնարավոր շահառուները տեղեկացված չեն եղել աճուրդի իրականացման վերաբերյալ, ինչի արդյունքում կազմակերպված աճուրդում մրցակցություն չի ապահովվել: Թեև Հանձնաժողովը կատարված ուսումնասիրության արդյունքում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության խախտումներ չի հայտնաբերել, այդուհանդերձ առաջարկել է համապատասխան շահագրգիռ պետական այլ մարմինների հետ համագործակցության շրջանակներում չեղյալ համարել Բագրատաշենի մաքսային կետի տարածքում տարածքի վարձակալության նշված մրցույթը և համապատասխան տարածքներ տրամադրելիս մաքսային կետերի տարածքում ապահովագրական գործունեության իրականացման հավասար հնարավորություններ ապահովել ԱՊՊԱ պայմանագրեր կնքող ՀՀ բոլոր ապահովագրական ընկերությունների համար: Վերը նշվածի արդյունքում նախկին աճուրդը վերանայվել է և ներկայումս մաքսային կետի հարակից տարածքում գործող տնտեսվարող սուբյեկտները հնարավորություն ունեն նշված ծառայությունները մատուցելու մաքսային կետի տարածքում:

Մրցակցության պաշտպանության և սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր խնդիրներից է հանդիսանում անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բացահայտումը, կանխարգելումը և դադարեցումը:

Անբարեխիղճ մրցակցության դեպքերի բացահայտման ուղղությամբ Հանձնաժողովի կողմից կատարվող ուսումնասիրությունները փաստում են, որ դրանք առավել հաճախ դրսևորվում են SMS հաղորդագրությունների, գնապիտակների, բուկլետների, վահանակների, պաստառների, ինտերնետային կայքերի միջոցով և զանգվածային լրատվական միջոցներով տարածվող գովազդներում:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունների արդյունքում մի շարք ընկերությունների գործողությունները որակվել են որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ: Այսպես, Հանձնաժողովի կողմից բացահայտված անբարեխիղճ մրցակցության դեպքերից ներկայացնենք հետևյալները.

Հանձնաժողով է դիմել «Նեմիրոֆ Ինթելեքթյուըլ Փրոփըրթի Իսթեբլիշմնթ» ընկերությունը հայտնելով, որ վերջինս հանդիսանում է «NEMIROFF» («ՆԵՄԻՐՈՖՖ») ապրանքային նշանի սեփականատերը նշելով, որ հայկական շուկայում առկա են նշված ապրանքային նշանով կեղծ օղիներ: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ «NEMIROFF» ապրանքային նշանը 2005 թվականից ՀՀ-ում հանդիսանում է հանրահայտ ապրանքային նշան, այն պաշտպանվում են պետության կողմից և նշված օղիները լայն տարածված են սպառողների շրջանում: Միաժամանակ Հանձնաժողովը պարզել է, որ ալկոհոլային խմիչքների շրջանառության ոլորտում գործող «Ա և Գ» ընկերությունն արտադրում և իրացնում է «NEMIROFF» ապրանքային նշանով՝ «Український мед» անվանումով օղիներ: Հանձնաժողովի կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «Ա և Գ» ընկերությունը չի ունեցել «NEMIROFF» ապրանքային նշանի օգտագործման թույլտվություն և վերջինիս կողմից այդ ապրանքային նշանով օղիների արտադրությունն ու իրացումը կարող են հասարակության շրջանում առաջացնել շփոթություն՝ իրական «NEMIROFF» օղիների նկատմամբ: Մրցակցության առումով խնդիրը կայանում է նրանում, որ ընկերությունները մեծածավալ ծախսեր են կատարում իրենց ապրանքային նշանի ճանաչվածության բարձրացման նպատակով և լինում են դեպքեր, երբ անբարեխիխճ ընկերությունն առանց այդ ծախսերի իրականացման փորձում է օգտվել սպառողներին արդեն իսկ հայտնի ապրանքային նշանից՝ շուկայում առաջացնելով անհավասար մրցակցային իրավիճակ: Տվյալ պարագայում պետք է նշել, որ «Ա և Գ» ընկերությունը նախկինում ևս (2016 թվականին) նմանօրինակ խնդրով, սակայն այլ անվանմամբ օղիների գծով հայտնվել է Հանձնաժողովի տեսադաշտում և ենթարկվել պատասխանատվության՝ յուրաքանչյուր օղու գծով 5 մլն դրամի չափով: Վերը նշվածը հաշվի առնելով Հանձնաժողովը «Ա և Գ» ընկերության գործողությունները որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում և հաշվի առնելով ընկերության կողմից կատարված խախտման կրկնակիությունը՝ կիրառել է պատասխանատվության միջոց 10 մլն դրամի չափով և հանձնարարել վերացնել օրենքի խախտումները:

Հանձնաժողովն ուսումնասիրություն է սկսել www.hetq.am կայքի հրապարակման հիման վրա, որի համաձայն «Արզնու տոհմային ԹՏՀ» ԲԲ ընկերությունը խախտում է մրցակցության օրենսդրության դրույթները: Ուսումնասիրության շրջանակներում ստացված տեղեկատվության վերլուծությունից պարզվել է, որ «Արզնու տոհմային ԹՏՀ» ընկերության կողմից արտադրված կարագը ենթարկվել է լաբորատոր փորձաքննության, որի արդյունքների համաձայն դրանում առկա են եղել բուսական յուղեր: Համաձայն Մաքսային միության կաթնամթերքին վերաբերող տեխնիկական կանոնակարգի կարագի բաղադրության մեջ բուսական յուղերի առկայություն չի կարող լինել, հետևապես նման ապրանքները որպես կարագ մակնշվել չեն կարող: Հանձնաժողովի կողմից «Արզնու տոհմային ԹՏՀ» ընկերության գործողությունները որակվել են որպես հասարակության մոլորեցում, որի համար ընկերությունը ենթարկվել է պատասխանատվության և տրվել է խախտումները վերացնելու և հետագայում բացառելու հանձնարարական:

Հանձնաժողովը ուսումնասիրություն է իրականացրել «Շշալցված հանքային ջուր» ապրանքային շուկայում, որի համար հիմք է հանդիսացել ««Դիլիջան» հանքային ջրի գործարան» ՍՊ ընկերության դիմումը: Դիմումատու ընկերությունը նշել է, որ հանդիսանալով «DILIJAN» ապրանքային նշանի իրավատերը՝ ներկայումս շուկայում հանդիպում է անբարեխիղճ մրցակցության դեպքերի հանքային ջրեր արտադրող մեկ այլ ընկերության կողմից: Հանձնաժողովն ուսումնասիրությամբ պարզել է, որ «DILIJAN» ապրանքային նշանը 2009 թվականից պատկանում է ընկերությանը, սակայն շուկայում գործող մեկ այլ՝ «Էմ այ բի քոնսալթինգ» ՍՊ ընկերությունն արտադրում է հանքային ջրեր՝ որպես պատկերային նշան օգտագործելով «DILIJAN» ապրանքային նշանը: Վերը նշված գործողությունը Հանձնաժողովը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում, կիրառել պատասխանատվության միջոց և տվել խախտումները վերացնելու հանձնարարություն:

Հանձնաժողովն ուսումնասիրություն է իրականացրել նաև «Վեգա Ուորլդ» ՍՊ ընկերության կողմից իրականացված գովազդի վերաբերյալ: Համաձայն գովազդի՝ «Ընկերության վաճառասրահներում գործում է ակցիա, որի շրջանակներում կիրառվում է զեղչ մինչև 100 տոկոսի չափով, հազարավոր արժեքավոր նվերներ, այֆոն հեռախոսներ և մերսեդես մակնիշի ավտոմեքենաներ»: Իրականացված ուսումնասիրության շրջանակներում պարզվել է, որ նշված ակցիան կիրառվում է միայն 25 000 դրամ և ավելի գնումների կատարման պարագայում, որի վերաբերյալ «Վեգա Ուորլդ» ընկերությունը գովազդում չի հայտնել, մինչդեռ նշված տեղեկատվությունը սպառողների

կողմնորոշման համար ունի էական կարևորություն: Հանձնաժողովը «Վեգա Ուորլդ» ընկերության նշված գործողությունը որակել է որպես անբարեխիղճ մրցակցության դրսևորում, կիրառել պատասխանատվության միջոց և տվել խախտումները վերացնելու հանձնարարական:

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում բացահայտել է նաև հասարակության մոլորեցման՝ անբարեխիղճ մրցակցության դրսևորման մի շարք դեպքեր, որոնք կապված են ապրանքի մակնշման, գովազդի ընթացքում ոչ ամբողջական տեղեկատվության ներկայացման և մտավոր սեփականության օբյեկտների օգտագործման իրավունքի խախտումների հետ:

Հանձնաժողովը 2018 թվականի ընթացքում շարունակել է ուսումնասիրությունները համակենտրոնացումների, այդ թվում՝ չհայտարարագրված համակենտրոնացումների բացահայտման ուղղությամբ, որի նպատակն է թույլ չտալ նույն կամ միմյանց հետ փոխկապակցված ոլորտներում գործող տարբեր ընկերությունների՝ միավորումների միջոցով օրենսդրությամբ արգելված խոշորացումը և գերիշխող դիրքի ամրապնդումը: Հանձնաժողովի կողմից 2018 թվականի ընթացքում պատասխանատվության են ենթարկվել թվով 7 տնտեսվարող սուբյեկտներ, որոնք սահմանված կարգով չեն հայտարարագրել համակենտրոնացումները:

Միաժամանակ Հանձնաժողովը շարունակել է տնտեսվարող սուբյեկտների դիմումների հիման վրա համակենտրոնացման դեպքերի ուսումնասիրությունը: Այս առումով նշված ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից կայացվել են համակենտրոնացումների թույլտվության 23 որոշումներ:

Տնտեսական մրցակցության միջավայրի կարգավորման և վերահսկման տեսանկյունից կարևորվում են նաև Հանձնաժողովի կողմից կատարվող աշխատանքները՝ կապված դատական մարմիններում բողոքարկված որոշումների պաշտպանության հետ: Այդ կապակցությամբ 2018 թվականի ընթացքում Հանձնաժողովը շարունակել է իրականացնել դատական ներկայացուցչություն՝ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների դատական կարգով բողոքարկման արդյունքում իրականացված դատական վարույթներով: Մասնավորապես, 2018 թվականի ընթացքում ավարտվել է Հանձնաժողովի՝ նախկինում բողոքարկված որոշումների թվով 2 դատական վարույթ, որի արդյունքում դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով Հանձնաժողովի՝ բողոքարկված համապատասխան որոշումը թողնվել է անփոփոխ: 2018 թվականի ընթացքում բողոքարկվել է Հանձնաժողովի թվով 11 որոշում, որոնց դատական

քննությունը շարունակվում է:

Գլուխ 4. Մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը

Համաձայն Հանձնաժողովի 2018 թվականի տարեկան գործունեության ծրագրով հաստատված մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների՝ հաշվետու տարվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Վերջին տարիներին իրականացված ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովը բացահայտել է բազմաթիվ դեպքեր, երբ առանձին ոլորտները կարգավորող տարբեր իրավական ակտերով սահմանված ընթացակարգերը, պետական մարմինների կողմից իրականացվող վարչարարությունը բացասաբար է անդրադառնձել շուկայում ձևավորված մրցակցային միջավայրի վրա: Այդ նպատակով կարևորելով պետական մարմինների դերը երկրում հավասար մրցակցային պայմանների ապահովման հարցում՝ Հանձնաժողովն իրականացրել է ուսումնասիրություն պետական մարմինների կողմից տնտեսվարող սուբյեկտներին լիցենզիաների, թույլտվությունների, համաձայնությունների և քվոտաների տրամադրման գործընթացում առաջացող մրցակցային խնդիրները բացահայտելու նպատակով: Կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գերատեսչությունների կողմից պետությանը պատկանող սահմանափակ ռեսուրսների օգտագործման իրավունքները տրամադրվում են ոչ մրցակցային կարգով: Այսպես օրինակ, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից բնական և կենդանական աշխարհից օգտվելու հնարավորություն ընձեռող թույլտվության (ձկան, խեցգետնի և այլ պաշարների օգտագործում) տրամադրման գործընթացում առավել վաղ դիմում ներկայացրած տնտեսվարող սուբյեկտներն ստանում են հնարավորություն իրականացնելու տվյալ գործունեությունը, իսկ մնացյալ տնտեսվարող սուբյեկտները զրկվում են այդ հնարավորությունից, քանի որ ձկան արդյունահանման համար նախատեսված քվոտաները սպառվում են:

Անհավասար մրցակցային պայմաններ առաջանում են նաև տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունքում: Այսպես, կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բացօթյա առևտրի կազմակերպման կամ հանրային սննդի կազմակերպման համար տարածքների տրամադրման գործընթացում հստակ չափորոշիչներ առկա չեն, համապատասխան մրցույթներ չեն իրականացվում և տնտեսվարող սուբյեկտների մի մասին կարող է տրամադրվել թույլտվություն իրականացնելու բացօթյա առևտուր, իսկ մյուս մասին՝ ոչ:

Բացի այդ, Հանձնաժողովն ուսումնասիրել է նաև պետական մարմինների կանոնադրությունները և նրանց կողմից իրականացվող գործառույթները, որի արդյունքում պարզել է, որ պետական գերատեսչությունների կամ վերջիններիս ենթակայությամբ գործող մարմիններն ունեն առևտրային կամ ձեռնարկատիրական գործունեության իրականացման գործառույթներ: Ընդ որում, այդ գործառույթները վերաբերում են այնպիսի ոլորտներին (լաբորատոր փորձաքննություն, պահնորդական ծառայություն և այլն), որոնցում գործունեություն են իրականացնում նաև բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պետական մարմինները ֆինանսավորվում են ՀՀ պետական բյուջեի միջոցներից, չեն վճարում ձեռնարկատիրական գործունեության համար սահմանված հարկեր (ԱԱՀ, շահութահարկ և այլն), ստանում են առավելություններ մասնավոր ընկերությունների նկատմամբ և հայտնվում բարենպաստ պայմաններում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում Հանձնաժողովի կողմից պետական մարմիններին ներկայացվել են համապատասխան առաջարկություններ՝ ուղղված շուկաներում հավասար մրցակցային պայմանների ապահովմանը:

2. Հանձնաժողովը կարևորում է հասարակության և գործարար շրջանակների կողմից մրցակցային օրենսդրության հանդեպ պատասխանատվության գիտակցության ձևավորման, իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ միջոցառումների կազմակերպումը: Հանձնաժողովը 2018 թվականի ընթացքում ևս կազմակերպել է մի շարք հանդիպումներ գործարար համայնքը ներկայացնող կազմակերպությունների հետ, որի ընթացքում ներկայացվել են մրցակցության օրենսդրության առանձնահատկությունները և քննարկվել բիզնեսի զարգացման խոչընդոտները: Հասարակության և բիզնեսի իրազեկվածության բարձրացման առումով Հանձնաժողովը 2018 թվականի ընթացքում շարունակել է ոչ միայն ինտերնետային կայքի, այլև մամուլի հրապարակումների, ասուլիսների, տարբեր հաղորդաշարերի, քննարկումների միջոցով ապահովել մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրների, ինչպես նաև առկա ձեռքբերումների վերաբերյալ լուսաբանումը: Այս առումով հարկ է հավելել, որ Հանձնաժողովը նիստերն անցկացնում է բաց ձևաչափով, որին կարող են մասնակցել ինչպես լրատվամիջոցները, այնպես էլ անհատ քաղաքացիները և տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչները, ինչն իր հերթին կարևոր գործիք է հասարակության և բիզնես համայնքի տեղեկացվածության բարձրացման հարցում:

3. Տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում առկա խնդիրները

արդյունավետորեն կարգավորելու նպատակով Հանձնաժողովը կարևորում է նաև գործող օրենսդրության կատարելագործումը՝ այն համահունչ դարձնելով հասարակական հարաբերությունների փոփոխություններին: Այս ուղղությամբ Հանձնաժողովը մշակել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով մրցակցության օրենսդրության դրույթները համապատասխանացվել են ԵԱՏՄ իրավական ակտերին, ՀՀ Սահմանադրության փոփոխություններին և ԵՄ առաջավոր փորձին: Նշված օրենքի նախագիծն ընդունվել է Ազգային ժողովի կողմից 2018 թվականի մարտի 23-ին:

Գլուխ 5. Հանձնաժողովի 2018 թվականի գործունեության ֆինանսական հաշվետվություն

Հանձնաժողովի ֆինանսավորումն իրականացվում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Հայաստանի Հանրապետության 2018 թվականի բյուջեով՝ որպես Հանձնաժողովի աշխատակազմի պահպանման ծախս, նախատեսվել է 314.768,90 հազար ՀՀ դրամ, ծախսվել է 311.383,67 հազար ՀՀ դրամ:

Հանձնաժողովի տարեկան ծախսերը

Հազ. դրամ

ՀՀ	Անվանում	Բյուջեով հաստատվել է	Ծախսվել է
1	Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	258,837,90	258,837,90
2	Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրումներ	14,791,40	14,791.40
3	Էներգետիկ ծառայություններ	3,615.30	3,089,68
4	Կոմունալ ծառայություններ	130.50	100,92
5	Կապի ծառայություններ	5,115,30	4,384,37
6	Ապահովագրական ծախսեր	200.00	200.00
7	Ներքին գործուղումներ	1,535,40	1,535,35
8	Արտասահմանյան Գործուղումներ	8,359,80	8,104,86
9	Համակարգիչների ծրագրային ծառայություններ	35,00	35.00
10	Տեղեկատվական ծառայություններ	1,227,80	1,199,27
11	Ներկայացուցչական ծախսեր	2,200,00	1,546,90
12	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	2,432,00	2,111,00
13	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	4,326,00	4,319.51
14	Գրասենյակային նյութեր և հագուստ	804.10	796,85
15	Տրանսպորտային նյութեր	4,745.00	4,658,66
16	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	152.00	152.00
17	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	6,206,00	5,520,00
18	Պարտադիր վճարներ	55,40	0,00
Ընդամենը		**314,768,90**	**311,383,67**

Հավելված

Աղյուսակ

Համաշխարհային մրցունակության զեկույցում Հայաստանի և մի շարք երկրներում շուկայում գերիշխող դիրք ունեցող սուբյեկտների ազդեցությունը մրցակցության վրա

Երկիր	Դիրք								
	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017	2018
					+114				
Հայաստան	***133***	***133***	***90***	***75***	***93***	***79***	***51***	***28***	***19***
Ռուսաստան	88	101	107	93	75	69	59	64	63
Ղազախստան	91	93	83	78	68	57	69	91	84
Վրաստան	113	112	121	119	103	88	76	67	80
Մոլդովա	102	111	130	133	125	124	127	122	119
Ուկրաինա	128	129	108	132	129	98	99	106	110
Լատվիա	70	59	51	62	64	61	65	79	58